

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ԱՂՔՈՒՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Լ. Ա. ԽԱՆՆԱՐՅԱՆ

Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» երկի 56-րդ գլուխը պատկանում է հայ պատմագրության մեջ լայն տարածում գտած մանր ժամանակագրությունների ժանրին: Գլուխը սկսվում է 561 և ավարտվում 1666 թվականով: Ինչպես երևում է հեղինակի հիշատակարանից, այն Առաքել Դավրիժեցու ձեռքով կազմված մի բանաբաղություն է, որտեղ տարբեր տեղերից հավաքված տեղեկություններն ի մի են բերված և շարադրված ըստ ժամանակագրական կարգի: Այն լրացված է նաև պատմիչի օրոք տեղի ունեցած նշանավոր դեպքերի մասին տեղեկություններով: Հեղինակը գրում է. «Թուականաւ նշանակեալ համառօտ բանիցս՝ թէպէտ օրինակն յառաջնոյ ժամանակաց գոյր, այլ ոչ էր կարգաւ թուականին, և մեք կարգատրեցաք: Երկրորդ՝ ոչ էր ժողով ի մի վայր՝ այլ մասն ինչ աստ, մասն ինչ անդ, և այնպէս ցիր և ցան, իսկ մեք ժողովեցաք ի մի վայր դոռու և գտաք: Երրորդ՝ և զոր ինչ ի մեր ժամանակս գործեցաւ նշանաւոր բանք՝ զայնս ևս ընդ սոցին դասատրեալ գրեցաք զիրաքանչիրսն յիրում տեղոջ և, հոգալով զայս, տքնութիւնս յուղվս կրեցաք և յայն սակս ի գիրս մեր գասակարգեալ գրեցաք»:

56-րդ գլխի նախնական ուսումնասիրությունը և նրա բաղդատումն այլ ժամանակագրական երկերի հետ՝ ցույց են տալիս, որ հեղինակը տեղեկություններ է քաղել այս ժանրին պատկանող այն երկերից, որոնց մի մասը հետագայում մտել է Վ. Ա. Հակոբյանի կազմած երկհատորյա ժողովածուի՝ մեջ կամ հիմք է ծառայել վերջիններիս համար:

Առաքել պատմիչի տեղեկությունները մեծ մասամբ բառացի, կամ աննշան շեղումներով, կրկնությունն են տարբեր մանր տարեգրությունների: Սակայն նույն գլխի մի զգալի մասի աղբյուրները երկար ժամանակ մնում էին անհայտ: Բնագրի շարադրանքից իսկ երևում է, որ Առաքել Դավրիժեցին մեծ աշխատանք է կատարել տարբեր ոճի բազմաթիվ աղբյուրներից քաղված հարուստ տեղեկությունները ի մի բերելու գործում: Եվ ստացվել է յուրատեսակ մի խճանկար, որում դեպքերը միահյուսված պետք է լինեին ժամանակագրական հաջորդականությամբ, շարունակեին իրար՝ ներկայացնելով հայ ժողովրդի և նրա հարևանների պատմության մի մեծ հատված: Այստեղ տեղ են գտել ինչպես հակիրճ հաղորդումներ, այնպես էլ ընդարձակ հատվածներ պատմական կարևոր իրադարձությունների մասին, նաև միմյանց հետ շանջվող աշխարհագրական, վիճակագրական և այլ բնույթի տեղեկություններ, անձնանուններ, տեղանուններ և փաստեր: Ըստ որում՝ հաճախ պատմական կարևոր դեպքերին հաջորդում են բնության տարբեր երևույթներ և անգամ «հրաշքեր» արտացոլող նկարագրություններ: Հատկապես աչքի են ընկնում Երզնկայում տեղի ունեցած երկրաշարժերի վերաբերյալ հաճախակի հանդիպող հաղորդումները:

Բացի այդ, ժամանակագրական տեղեկությունների հակիրճ ոճը երբեմն ընդհատվում է ընդարձակ շարադրանքով, որն ավելի շատ է նկատվում 56-րդ գլխի վերջին մասերում, սկսած 1598 թ.: Լինելով ժամանակակից՝ հեղինակն

¹ Սանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան. հ. I, II, Երևան, 1951—1956:

այս հաստատվածներում մանրամասն հաղորդում է արժեքավոր, երբեմն բացառիկ նշանակություն ունեցող տեղեկություններ, որոնք չկան այլ աղբյուրներում:

Եվ, վերջապես, ևս մի հանգամանք. ժամանակագրական ոճը, հատկապես երկու դեպքում, իր տեղը գիջում է պարզ արտահայտված հիշատակարանային ոճին: Ըստ որում՝ երկու դեպքում էլ բնագրի ոճը հուշում է տեղեկությունների աղբյուրի հիշատակարանային բնույթի մասին: Դրանցից մեկը արտացոլում է 1443 թ. էջմիածնում կաթողիկոսական աթոռի շուրջը ծավալված պայքարը և պատկանում է Կիրակոս Ռշտունցու գրչին²: Մյուսը՝ 1306 թ. դեպքերը վերարտադրող մի ընդարձակ, գրեթե 2 էջանոց հիշատակարան է, որում հեղինակը, Տարոնի Ս. Ղազարի վանքի միաբաններից մեկը, շարադրում է Ղարբանտա խանի (1304—1316) օրոք տեղի ունեցած արհավիրքների պատմությունը³: «Ի կայսերական բռնակալութեան,— գրում է նա,— ազգին նետողաց Ղարբանտայ խանին, որ էր այր շար և ասեցող քրիստոնէից... սակայն... հանել զհրովարտակ ընդ ամենայն տիեզերս, որ ընդ իրով իշխանութեամբ էին՝ ի վերայ քրիստոնէից, այնու կամ դառնայ ի մոլար դաւանութիւն Մահմետի, և կամ տալ խարած ամէն իւր գլխոյն՝ զութն դահեկան, և թուք և ապտակ յերեւն, և գմուրուսն ճողել և սև կարկտան մի ի վերայ այդ ուսին կարել, նախատինք վասն Քրիստոսի. և շար դեսպանքն իբրև զարինարբու գազան արձակեցան ի վերայ ամենայն քրիստոնէից...»:

Այս երկրորդ հատվածի կապակցությամբ ձեռնարկված որոնումները վերջերս հաջողությամբ պսակվեցին: Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատակից Արտաշես Մաթևոսյանի հավաքած հիշատակարանների թրվում մենք հանդիպեցինք երեք հիշատակարանների⁴, որոնք գրված են նույն աշխարհագրական վայրում, մոտավորապես նույն ժամանակահատվածում, նկարագրում են նույն դեպքերը և ունեն ճիշտ նույն լեզուն և ոճը, ինչ որ ունի Տարոնի գրչի՝ Առաքել Դավրիժեցու կողմից գրի առած վերոհիշյալ հատվածը: Նրանց համադրությունը մեզ բերում է այն հաստատ համոզման, որ բոլորի հեղինակը միևնույն անձնավորությունն է՝ Տարոնի Ս. Ղազարի վանքի միաբան, զրիչ Առաքելը: Այսպես, հիշատակարաններից մեկում (№ 17, ճաշոց) կարդում ենք. «...գրեցաւ սա ի գաւառիս Տարանոյ յաստուածապատիւ և ի հրեշտակացոց ս. ուխտիս Ղազարու վանք կոչեցեալ՝ ընդ հովանեաւ ս. Առաքելոցս՝ ...ի հայոց թուին ՉԿԳ ձեռամբ բազմամեղ կրանաւորի և անիմաստ գրչի Առաքելի...» և այլն⁵:

Քննության աուարկա հանդիսացած նյութերի շարքում է նաև Մաշտոցի անվան Մատենադարանի № 10200 ձեռագիրը, որում ի թիվս պատմական, տոմարագիտական և այլ բազմազան նյութերի, գտնվում են բացառիկ հետաքրքրություն ներկայացնող երկու գործ: Դրանցից առաջինը անանուն մի փոքր ժամանակագրություն է, նվիրված Երզնկայում տեղի ունեցած երկրաշարժերին (էջ 382բ):

Երկրորդ գործի խորագիրն է «Անարժան Ամիրասէ Եղրնկացոյ արարեայն է. ժողածոյ...»: Այսինքն, ժամանակագրության հեղինակն է հայտնի գրիչ Ամիրաս Երզնկացին (որից մնացել են 1638—57 թթ. Տրապիզոնում րնդօրինակած ժողովածուն և Ոսկեփոքիկը): № 10200 ձեռագիրը եղել է հայտնի հա-

² Նույն տեղում. հ. I, էջ 113—114:

³ Նանրամասն տե՛ս 2. Մ ան ան դ յ ան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Երկեր, հ. Գ, Երևան, 1977, գլ. XVIII, էջ 324—328:

⁴ Ն. Մ ու ու ր ա տ յ ան և ն. Մ ար տ ի ո ս յ ան. Յուրակ ձեռագրաց Մշո Ս. Առաքելոց-Քարզմանչաց վանքի և շրջակայից. Երուսաղեմ, 1967, էջ 19—21, № 17 (1314 թ.), № 18 (1315 թ.), № 19 (1316 թ.):

⁵ Նույն տեղում, էջ 19:

յագետ Գրիգոր հալաթյանցի սեփականությունը, որի ժառանգներից Մատենադարանը այն ձեռք է բերել միայն 1963 թ.: Այդ իսկ պատճառով Ամիրասի ժամանակագրությունը չի մտել Վ. Ա. Հակոբյանի կազմած ժողովածուի մեջ:

Սկզբից ևեթ նշենք, որ երկրաշարժերին վերաբերող բոլոր տեղեկությունները, աննշան բացառությամբ, թեթևակի խմբագրումից հետո, տեղ են գտել Ամիրաս Երզնկացու ժամանակագրության մեջ, որտեղից և դրանք ընդօրինակել է Առաքել Դավրիժեցին:

Վերադառնալով Առաքել Դավրիժեցու երկի 56-րդ գլխի աղբյուրների հարցին, ասենք, որ այժմ հասկանալի է դառնում այդ գլխում նրվնկայի երկրաշարժերի վերաբերյալ գրառումների հաճախակիությունը: Այսպիսով, Առաքել Դավրիժեցու օգտագործած սկզբնաղբյուրների թվին ավելանում է ևս մեկը՝ Երզնկայի երկրաշարժերի ժամանակագրությունը:

Ամիրաս Երզնկացու ժամանակագրության էջերի (386ա—389բ) լուսանցքում գետեղված է Տարոնի գավառից Առաքել գրչի վերը մեջ բերած 1306 թ. հիշատակարանը, ըստ որում վերջինս հատուկ նշանով ներմուծված է Չհ (1291) և ՉՂԴ (1345) թթ. դեպքերը պառունակող գրառումների միջև: Ուշագրավ է, որ վերը նշված երեք տեղեկություններն էլ առկա են Առաքել Դավրիժեցու երկում:

Ամիրասի ժամանակագրությունը, ինչպես և Առաքել Դավրիժեցու գրքի քննարկվող գլուխը, սկսվում է հայոց 10-րդ (=561) և ավարտվում, ինչպես ասվեց, 1115 (1666) թվականով: Այս պատմական երկի հիմնական մասը հաջորդաբար և հետևողականորեն շարադրում է Հայաստանի և մասամբ նրա հարևան երկրների կյանքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները: Միայն վերջին էջերի շարադրանքը կցկտուր է և ոչ այնքան կանոնավոր. այս հանգամանքը թույլ է տալիս մտածել, որ հեղինակն իր գործը վերջնական ավարտի չի հասցրել:

Առաքել Դավրիժեցու և Ամիրաս Երզնկացու վերոհիշյալ ժամանակագրություններն ունեն բազմաթիվ ընդհանրություններ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ վերջինս սկզբնաղբյուր է ծառայել Առաքել Դավրիժեցուն՝ աշխատության 56-րդ գլուխը շարադրելու համար: Մեր կարծիքը հաստատող լրացուցիչ փաստ է նաև Ամիրաս Երզնկացու ժամանակագրության հետևյալ խորագրով հատվածը. «Սկիզբն զգրլպաշին, որ եղև թագաւոր»: Այն համարյա բառացիորեն համապատասխանում է Առաքել Դավրիժեցու 52-րդ գլխին, որը խորագրված է «Ազգաբանութիւն պարսից թագաւորացն»:

Երկու ժամանակագրությունների համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս մտածել, որ Առաքել պատմիչը, նյութը քաղելով Ամիրաս Երզնկացուց, մշակել է այն, ճշգրտել, լրացրել, սրբագրել, և ապա նոր գրանցել իր աշխատության մեջ: Այսպես, Ամիրաս Երզնկացու մոտ կարդում ենք. «Թվին ԶԺԳ (=1264) Շահպաւտինն տարաւ զՎարդան վարդապետն ի մաւան Հուլուն խանին, բազում բան իմաստութեան հարցումն արարին և մեծաւ պատուով պատուեաց զվարդապետն»⁶: Առաքելը գրում է. «Թուին ԶԺԳ (=1264) Շահպաւտինն տարաւ զվարդապետն Վարդան ի մօտ Հուլաւու խանին, բազում բանս իմաստութեան հարցումն արար և մեծաւ պատուով պատուեաց զվարդապետն»⁷: Ինչպես տեսնում ենք, Առաքելը կամ օգտվել է ժամանակագրության ճշգրիտ օրինակից, կամ ինքը ճշգրտել է անձնանունները և այսպիսով ուղղել իր աղբյուրը:

⁶ Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 10200, էջ 385բ:

⁷ Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցույ. Վաղարշապատ, 1896, էջ 624:

Համարյա ամենուրեք Ամիրասի գրառումներն ընդօրինակելիս Առաքել Դավրիժեցին ընդհատում է այդ տեղեկությունները, ներմուծելով նույն տարեթվին վերաբերող այլ տեղերից քաղված տեղեկություններ: Այսպես, Ամիրասը գրում է. «Թվականին Ոհն (=1176) թաղատր Երուսաղեմի եհար զԱհալատին սուլթան ի դուռն Երուսաղեմի, որ եկեալ էր ճիւղ (140000) հոգով առնուլ զԵրուսաղեմ: Թվականին Ոհն (=1196) յոյնք ծոազատիկ են արեր»⁸: Սրան Առաքելի երկում համապատասխանում է հետևյալ հատվածը. «Թուին Ոհն թագատրն Երուսաղեմի եհար զՍալահաղին սուլթանն ի դուռն Երուսաղեմի, որ եկեալ էր ճիւղ հոգով առնուլ զԵրուսաղեմ: Թուին Ուլ (=1187) թարգմանեաց Մխիթար պատուեալ քահանայ կաթողիկեցի զպատճառս խաւարման արեգական և լուսնի, ի պարսկէ միոջէ Ոճիքէ անունն, զոր ասէր թարգմանեալ Յունաց ի Պարս: Դարձեալ ի սոյն թուին խաւարեցաւ արեգակն, դարձեալ ի սոյն թուին Մսրա սուլթան Սալահաղինն էառ զԵրուսաղեմ ի նուանկէն: Թուին Ոհն (=1196) թագատրեաց Հայոց կետն: Դարձեալ ի սոյն թուին Յոյնք ծոազատիկ են արարեալ»⁹: Այստեղ Առաքել Դավրիժեցին, այլ աղբյուրներից քաղելով, Ամիրասի տվյալների մեջ ներմուծում է տեղեկություններ Մխիթար Անեցու թարգմանության, արեգակի և լուսնի խավարման վերաբերյալ, հայտնում է Երուսաղեմի գրավման, կետն թագավորի գահակալության մասին, ապա շարունակում է Ամիրասի տեղեկությունները: Եվ այսպես գրեթե ամենուրեք:

Առաքել Դավրիժեցու երկով զբաղված մասնագետներին հայտնի է, որ «Գիրք պատմութեանց»-ը պարունակող բոլոր ձեռագրերը անխտիր. ինչպես նաև երեք հրատարակությունները և անգամ ֆրանսերեն, ռուսերեն և լեհերեն թարգմանություններն ունեն բացթողումներ և աղճատումներ: 56-րդ դլխի աղբյուրները որոշելու հարցը, որքան էլ որ հետաքրքիր է և գրավիչ, ինքնանպատակ չի եղել մեզ համար: Մենք նպատակ ենք ունեցել այդ աղբյուրների միջոցով լրացնել բնագրում առկա բացթողումները և ուղղել աղճատումները:

Մեզ հետաքրքիր զլխի և նրա աղբյուրների քննությունը հանգեցնում է այն եզրակացության, որ այդ գլուխը Առաքել Դավրիժեցին չի ավարտել: Հայտնի է, որ գրքի ընդհանուր շարադրանքը վերջացնելուց հետո (1662 թ.) պատմիչը շարունակել է աշխատել ինչպես ամբողջ գրքի, այնպես էլ 56-րդ զլխի վրա: Համենայն դեպս, հետազոտողները գտնում են, որ աշխատության ձեռագրերից մեկում պատմիչն իր ձեռքով ավելացրել է մի գլուխ՝ Իզմիրում սկսված և Օսմանյան կայսրության սահմաններում ու նրանից դուրս լայն արևազանք ստացած մեսիական շարժման և նրա ղեկավար հրեա Սաբաթայ Ցեվիի մասին: Բացի դրանից Առաքել Դավրիժեցուն են վերագրում ժամանակաշրջությունների վերջում ավելացված ընգարձակ տեղեկությունները 1666, 1667 և անգամ 1668 թթ. դեպքերի վերաբերյալ:

Առաքել Դավրիժեցու ժամանակագրության մեջ հանդիպող բացթողումները, կրկնությունները, սխալ տեղեկությունները և նման այլ տվյալները գալիս են հաստատելու մեր միտքն այն մասին, որ պատմիչը, ինչպես ասացինք, ի հասցրել վերջնական ավարտի բերել այս գլուխը, այլ կերպ՝ Առաքելի պեստուգապատում հեղինակի համար նշված թերությունները անբացատրելի կրե՛նային:

Առաքել Դավրիժեցու պատմագրքի 56-րդ զլխի աղբյուրների որոնման և րոշման ուղղությամբ ամբողջ այս աշխատանքը թեև տվեց որոշակի արդուներ, բայց վերջնականապես ավարտված չէ: Բնագրի նշված թերություններ վերացնելու առումով որոշ հույս է ներշնչում Երուսաղեմի Ս. Հակոբյանց

⁸ ՄՄ, ձեռ. № 10200, էջ 385բ:

⁹ Պատմութիւն Առաքել վարդապետի..., էջ 623:

Մատենադարանի № 3701 ձեռագրում պահպանված ժամանակագրությունը¹⁰ որը շատ բնդհանուր տեղեր ունի Առաքել Դավրիժեցու և Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունների հետ: Նրանում առկա են նաև Առաքելի երկուս հանդիպող սխալներից մի քանիսը: Այս շեշտված բնդհանուրությունները, ինչպես նաև Սրուսաղեմի ժամանակագրության աչքի զարնող ինքնուրույնությունը և տեղային կոլորիտը (այն, թվում է, կիլիկյան ծագում պետք է ունենա): ինչպես նաև մի շարք չափազանց հետաքրքիր տեղեկություններ, որոնք բացակայում են մեր հեղինակի գործում, հիմք են առնում մտածելու, որ Սրուսաղեմի ժամանակագրության հեղինակը և Առաքել Դավրիժեցին օգտվել են մի բնդհանուր աղբյուրից:

ОДИН ИЗ ИСТОЧНИКОВ ТРУДА АРАКЕЛА ДАВРИЖЕЦИ

Л. А. ХАНЛАРЯН

Резюме

Глава 56-я «Книги историй» Аракела Даврижеци относится к широко распространенному в армянской историографии XIII—XVIII вв. жанру малых хроник. Как признается в нескольких предваряющих хронике строках сам автор, это—компиляция из предыдущих трудов того же жанра, собранных и скомпонованных историком, дополненных свидетельствами о современных ему событиях. К сожалению, во всех рукописях «Книги историй», в трех изданиях и во французском и русском ее переводах есть пробелы. При подготовке научно-критического текста труда Аракела Даврижеци нами проделана большая работа по определению источников указанной главы с целью заполнения лакуны: в ходе работы был найден новый, неизвестный до сих пор источник хроник Аракела Даврижеци—хроника Амираса Ерзынкаци, дошедшая до нас в рукописи № 10200 Матенадарана им. Маштоца. Ее анализу и посвящена статья.

¹⁰ Ժամանակագրությունը (XI—XVIII սս.) հասվածարար արտարագրել է Ն. Գողորյանի կողմից «Բանբեր Մատենադարանի» № 9-ում (1969 թ.), իսկ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատակից Փ. Անթարյանի ջանքերով վերջերս բերվել է նրան նրա լրիվ բնագրի միլրոծապալենը: